ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌԻԻ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Թումանյան **02/14/2025**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 անդամներ:

Բացակա էին՝
<<Հանրապետություն>> խմբակցության անդամ՝ Ռոման Շաքարյանը
<<Քաղաքացիական պայմանագիր >> խմբակցության անդամներ՝ Հովնան Բեգլարյանը, Սեդրակ Գալստյանը, Սվետլանա Եգանյանը, Նարեկ Հովհաննիսյանը և Ռաֆիկ Մարուքյանը

Նիստին մասնակցում էին՝
Լոռու մարզպետի տեղակալ Գ.Ասրյանը,Լոռու մարզպետի աշխատակազմի ՏԿ և ՏԻ հարցերի վարչության պետ Մ.Խեչումյանը, Լոռու մարզպետի աշխատակազմի աշխատակից,Վարչական ղեկավարները, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցները և բնակիչներ,

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Սուրեն Թումանյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Ռուզաննա Շահվերդյանը

ԼՍԵՑԻՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասով՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Թումանյան համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգը.

1) ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու 2025թ. փետրվարի 14-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին
2) Թումանյան համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին
3) Թումանյան համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին
4) Թումանյան համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը հաստատելու մասին
5) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու 2022 թվականի

հունվարի 18-ի N 3- Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
6) Թումանյան համայնքի ավագանու 2024թ. դեկտեմբերի 20-ի «Թումանյան համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 119-Ն որոշմանմեջ փոփոխություններ կատարելու մասին
7) Թումանյան համայնքի Թումանյան քաղաքի 06-004-0050-0006 ծածկագրի 0.01729 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդային կարգով օտարելու մասին
8) Թումանյան համայնքի Դսեղ գյուղի 06-035-0106-0016 ծածկագրի 0.64367 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդային կարգով օտարելու մասին
9) Թումանյան համայնքի Թումանյան քաղաքի 06-004-0020-0038 ծածկագրի 0.00216 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդային կարգով օտարելու մասին
10) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող Մարց գյուղի վարչական տարածքում գտնվող 06-071-0101-0052 ծածկագրի 0.16148 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք գործառնական նշանակության հողամասը մրցույթով վարձակալությամբ տրամադրելուն համաձայնություն տալու մասին
11) Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին
12) Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին
13) ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքերի աճուրդի անցկացման կանոնակարգը հաստատելու մասին
14) Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմի մասին
15) ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի գյուղական բնակավայրերում գյուղատնտեսության արդյունավետության բարձրացման նպատակով սիլոսահավաք կոմբայնի և ոռոգման համակարգի ձեռքբերման մասին
16) Թումանյան համայնքի բնակավայրերի տնտեսական և սոցիալական զարգացմանն ուղղված սուբվենցիաների տրամադրման մասին
17) ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը որոշելու մասին

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 1-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՄԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ)

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով՝

Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Թումանյան համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 2-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՄԵՆ ՉՈՓՈՒՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով, հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2022թվականի ապրիլի 15-ի << Թումանյան համայնքի 2022-2026 թվականի զարգացման ծրագրի հաստատման մասին>> N 26-Ա որոշումը և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվացքների նախարարության ներկայացրած համայնքի տարեկան աշխատանքային պլանի մշակման մեթոդական ուղեցույցը՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝համաձայն հավելվածի:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 3-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՄԵՆ ՉՈՓՈՒՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 4.1 ենթակետով և 82.1-րդ հոդվածով՝

Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Թումանյան համայնքի 2024 թվականիտարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝համաձայն հավելվածի:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 4-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի N 3-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՌՈՒԶԱՆՆԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ)

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, <<Պետական կառավարչական հիմնարկների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 18-ի « Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը հաստատելու մասին» N 3- Ասրոշման մեջ կատարել փոփոխություններ և հաստատել նոր խմբագրությամբ կանոնադրությունը.

1) Որոշման 10-րդ կետը ուժը կորցրած ճանաչել.
2) 2-րդ գլխի 16-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«16.Աշխատակազմի կառավարումն իրականացնում է համայնքի ղեկավարը՝ օրենքով այլ իրավական ակտերով իրեն վերապահված լիազորությունների սահմաններում՝ անձամբ և իր առաջին տեղակալի միջոցով,որոնք գործում են համայնքի ղեկավարի անունից, համապատասխանաբար համակարգում են Աշխատակազմի,կազմակերպությունների աշխատանքները և պատասխանատվություն են կրում իրենց համակարգման ոլորտում գործող Աշխատակազմի աշխատանքների արդյունավետ կազմակերպման և անհրաժեշտ արդյունքների ապահովման համար:».
3) 2-րդ գլխի 18-րդ կետի 2-րդ ենթակետի բ. պարբերությունից հանել «այդ թվում ստորաբաժանումների»բառերը.
4) 2-րդ գլխի 18-րդ կետի 2-րդ ենթակետի գ. պարբերությունից հանել «ինչպես նաև ստորաբաժանումների կառուցվածքների»բառերը.
5) 2-րդ գլխի 18-րդ կետի 2-րդ ենթակետի թ. պարբերությունում ավելացնել «գույքը»բառը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«թ. համայնքի սեփականություն համարվող գույքը օտարման կամ օգտագործման տրամադրելու վերաբերյալ,».
6) 2-րդ գլխի 18-րդ կետի 6-րդ ենթակետից հանել «կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներին»բառերը.
7) 2-րդ գլխի 18-րդ կետի 7-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«7) «պաշտոնից ազատում է համայնքի ղեկավարի առաջին տեղակալին,».
8) 2-րդ գլխի 18-րդ կետի 8-րդ ենթակետի «տեղակալներից մեկի վրա»բառերը փոխարինել «առաջին տեղակալի վրա» բառերով.
9) 2-րդ գլխի 18-րդ կետի 10-րդ ենթակետի «ստորաբաժանումների»բառը փոխարինել «աշխատակիցների» բառով.
10) 2-րդ գլխի 19-րդ կետի «տեղակալը»բառերը փոխարինել «առաջին տեղակալը» բառերով.
11) 2-րդ գլխի 19-րդ կետի 1-ին,2-րդ և 4-րդ ենթակետերից հանել «ստորաբաժանումներին» բառերը.
12) 2-րդ գլխի 21-րդ կետից հանել «մամուլի քարտուղար,ռեֆերենտ»բառերը.
13) 2-րդ գլխի 23-րդ կետի 4-րդ ենթակետից հանել«ստորաբաժանումների ղեկավարների»բառերը.
14) 2-րդ գլխի 24-րդ կետը ուժը կորցրած ճանաչել.
15) 2-րդ գլխի 25-րդ կետը ուժը կորցրած ճանաչել.
16) 2-րդ գլխի 28-րդ կետը ուժը կորցրած ճանաչել.
17) 2-րդ գլխի 29-րդ կետը ուժը կորցրած ճանաչել.
18) 2-րդ գլխի 30-րդ կետը ուժը կորցրած ճանաչել.
19) 4-րդ գլխի 33-րդ կետը ուժը կորցրած ճանաչել.
20) 4-րդ գլխի 34-րդ կետում նշված «ստորաբաժանումներն»բառը հանել, շարադրել հետևյալ խմբագրությամբ «Աշխատակազմը,ինչպես նաև համայնքային կազմակերպություններն ունեն կանոնադրություններ,որոնք համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատվում են համայնքի ավագանու կողմից » բառերով.
21) 5-րդ գլուխը ուժը կորցրած ճանաչել:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 5-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի <<ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 119-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկ. ԱՐՄԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ)

Ղեկավարվելով <<ՀՀ բյուջետային համակարգի մասին >> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով << Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Թումանյան համայնքի ավագանու 2024թ. դեկտեմբերի 20-ի «Թումանյան համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 119-Ն որոշմանմեջ կատարել փոփոխություններ և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 1-ից թիվ 6 հատվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 6-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ 06-004-0050-0006 ԾԱԾԿԱԳՐԻ 0.01729 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՌՈՄԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ, 67-րդ և 68-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 13 կետի գ/ ենթակետով և V-րդ բաժնի պահանջներով ՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Աճուրդային կարգով օտարել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի N 17122024-06-0061 վկայական/ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում չդասվող 06-004-0050-0006 ծածկագրում գտնվող 0,01729 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գինը սահմանել՝ 150 000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:
2. Աճուրդի մասնակցության նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50%–ի չափով:
3. Աճուրդի դրված հողամասի մեկ քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 7-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՍԵՂ ԳՅՈՒՂԻ 06-035-0106-0016 ԾԱԾԿԱԳՐԻ 0.64367 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՌՈՄԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ, 67-րդ և 68-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 13 կետի գ/ ենթակետով և V-րդ բաժնի պահանջներով ՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Աճուրդային կարգով օտարել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի N 17122024-06-0022 վկայական/ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում չդասվող

06-035-0106-0016 ծածկագրում գտնվող 0,64367 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գինը սահմանել՝ 7 140 000 (յոթ միլիոն հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ:
2. Աճուրդի մասնակցության նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50%–ի չափով:
3. Աճուրդի դրված հողամասի մեկ քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 8-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ 06-004-0020-0038 ԾԱԾԿԱԳՐԻ 0.00216 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՌՈՄԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ, 67-րդ և 68-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 13 կետի գ/ ենթակետով և V-րդ բաժնի պահանջներով ՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Աճուրդային կարգով օտարել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի N 27012025-06-0049 վկայական/ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում չդասվող 06-004-0020-0038 ծածկագրում գտնվող 0,00216 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գինը սահմանել՝ 101 000 (մեկ հարյուրմեկ հազար) ՀՀ դրամ:
2. Աճուրդի մասնակցության նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50%–ի չափով:
3. Աճուրդի դրված հողամասի մեկ քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 9-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՐՑ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-071-0101-0052 ԾԱԾԿԱԳՐԻ 0.16148 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՌՈՄԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման 8-րդ հոդվածով, հիմք ընդունելով սեփականության իրավունքի N 25122024-06-0058 վկայականը և հաշվի

առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող Մարց գյուղի կադաստրային քարտեզի 06-071-0101-0052 ծածկագրի 0.16148 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք գործառնական նշանակության հողամասը մրցույթով վարձակալությամբ տրամադրելուն:
2.Հաստատել վարձակալության տարեկան մեկնարկային վճարը՝5000 (հինգ հազար) ՀՀ դրամ,նախավճարի չափը մեկնարկային վճարի 5%,քայլի չափը՝մեկնարկային վճարի 5%-ի չափով:
3.Գյուղատնտեսական նշանակության հողամասը տրամադրվում է 25 (քսանհինգ) տարի ժամանակով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 10-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՌՈՄԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ և 52-րդ հոդվածներով,<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-18-րդ հոդվածներով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով,ՀՀ քաղաքաշինության մասին օրենքով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումը և որակավորված <<ՏՍ-ՌԻԵԼԹԻ>> ՍՊԸ- ի կողմից տրված հողամասի հատակագիծը՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հետ կապված անճշտությունների ուղղման համար,Թումանյան համայնքի Լորուտ գյուղի կադաստրային քարտեզի 06-045-0038-0006 կադաստրային ծածկագրից առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,0438 հա մակերեսով հողամասի (համաձայն 1 հատակագծի) նկատմամբ, քանի որ գոյություն չունեն որևէ իրավունք հաստատող փաստաթղթեր, սեփականաշնորված չեն և այն ՀՀ կառավարության 08.04.2004 թվականի N 479-Ն որոշմամբ փոխանցված չէհամայնքին: Առաջնորդվելով ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշման 4-րդ հոդվածի 39 կետի 1-ին ենթակետի պահանջներով, նշված հողամասի նկատմամբ ճանաչել Թումանյան համայնքի սեփականության իրավունքը:
2. Նշված հողամասը ենթակա է գրանցման Թումանյանի համայնքապետարանի անվամբ:
3. Թույլատրել համայնքի ղեկավարին՝ դիմել ՀՀ Կադաստրի կոմիտե նշված հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի վկայական ստանալու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 11-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՌՈՄԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ և 52-րդ հոդվածներով,<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-18-րդ հոդվածներով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով,ՀՀ քաղաքաշինության

մասին օրենքով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումը և որակավորված <<ՏՍ-ՌԻԵԼԹԻ>> ՍՊԸ- ի կողմից տրված հողամասի հատակագիծը՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հետ կապված անճշտությունների ուղղման համար,Թումանյան համայնքի Լորուտ գյուղի կադաստրային քարտեզի 06-045-0038-0006 կադաստրային ծածկագրից առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,0438 հա մակերեսով հողամասի (համաձայն 2 հատակագծի) նկատմամբ, քանի որ գոյություն չունեն որևէ իրավունք հաստատող փաստաթղթեր, սեփականաշնորված չեն և այն ՀՀ կառավարության 08.04.2004 թվականի N 479-Ն որոշմամբ փոխանցված չէհամայնքին: Առաջնորդվելով ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշման 4-րդ հոդվածի39 կետի 1-ին ենթակետի պահանջներով, նշված հողամասի նկատմամբճանաչել Թումանյան համայնքի սեփականության իրավունքը:
2.Նշված հողամասը ենթակա է գրանցման Թումանյանի համայնքապետարանի անվամբ:
3. Թույլատրել համայնքի ղեկավարին՝ դիմել ՀՀԿադաստրի կոմիտե նշված հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի վկայական ստանալու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 12-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ԱՃՈՒՐԴԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՌՈՒԶԱՆՆԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, ՀՀ հողային օրենսգրքի 67,68,69-րդ և 70-րդ հոդածների,<< Հրապարակային սակարկության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 12.04.2001թ N 286 որոշմամբ հաստատված կարգի V գլխի պահանջներով՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Թումանյանի համայնքապետարանի աճուրդների անցկացման կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 13-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՌՈՒԶԱՆՆԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ)

Ղեկավարվելով <<Համայնքայի ծառայության մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու անդամներից համայնքային ծառայության մրցութայ ին և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների թիվը սահմանել 3 և ընդգրկել հետևյալ ավագանու անդամներին.

1) Շաքարյան Ռոման Ռոբերտի
2) Վանյան Դավիթ Սոսի
3) Խաչիկյան Գոհարիկ Սարգսի
2.Ուժը կորցրած ճանաչել՝ Թումանյան համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 18-ի <<Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների >> թիվ 12-Ա որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 14-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍԻԼՈՍԱՀԱՎԱՔ ԿՈՄԲԱՅՆԻ ԵՎ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՄԵՆ ՉՈՓՈՒՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 27-ի N 105-Լ որոշումը և հաշվի առնելով Թումանյան համայնքի ղեկավարի առաջարկությունը՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Թույլատրել Թումանյան համայնքի ղեկավարին՝ համայնքի կարիքների համար համայնքի զարգացման ծրագրի և Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագրի շրջանակներում լիզինգային եղանակով ձեռք բերել.
1) սիլոսահավաք կոմբայն՝ DON 680M մակնիշի,
2) ոռոգման համակարգ Dias F-90/500 :
2.Թումանյան համայնքի 2025 թվականի բյուջեից կատարել կանխավճար լիզինգի առարկայի արժեքի 20%-ի չափով:
3.Լիզինգի առարկայի արժեքը կազմում է կոմբայնի համար՝ 44,000,000 (քառասունչորս միլիոն) ՀՀ դրամ, ոռոգման համակարգի համար՝ 16,500,000 (տասնվեց միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, լիզինգի առարկայի ընդհանուր արժեքը կազմում է 60,500,000 (վաթսուն միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, որից կանխավճարի գումարը կազմում է 12,100,000 (տասներկու միլիոն հարյուր հազար) ՀՀ դրամ:
4.Կոմբայնի համար 2025-2035 թթ., իսկ ոռոգման համակարգի համար 2025-2028 թթ. ընթացքում, յուրաքանչյուր տարվա համար համայնքի բյուջեում նախատեսել առնվազն լիզինգի գծով վարձավճարների չափով ծախսային համապատասխան հոդված՝ պահպանելով <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:
5.Լիզինգի վարձավճարների վճարումները նախատեսել յուրաքանչյուր տարի ապրիլից- դեկտեմբեր ամիսներին:
6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 15-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՄԵՆ ՉՈՓՈՒՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 6-րդ ենթակետով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2019թ.հունվարի 31-ի N 62-Ն որոշման <<Հայաստանի Հանրապետության պետական տարեկան բյուջեներով նախատեսված սուբվենցիաներից բացի Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի հայտի մշակման, ներկայացման>> կարգի 31.01.2019թ. 62-Ն որոշման N 1 հավելվածիև 06.11.2006թ. N 170-Նորոշման N 2 հավելվածի,ինչպես նաև ՀՀ Կառավարության որոշումը ՀՀ պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին 16 նոյեմբերի 2006 թվականի N 1708-Ն որոշում՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաներ ստանալու նպատակով Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզի, Թումանյան համայնքի սուբվենցիոն հայտերին.

1/<< Թումանյան համայնքի Թումանյան քաղաքի Կենտրոնական, 2-րդ 3-րդ և 12-րդ փողոցների ասֆալտապատում >> ,
2/<<Թումանյան համայնքի Չկալով բնակավայրի խմելու ջրի արտաքին ջրագծերի վերանորոգում>>,
3/<<Թումանյան համայնքի Դսեղ բնակավայրի 17-րդ փողոցի սալարկում տուֆով>> ,
4/<<Թումանյան համայնքի Թումանյան, Մարց, Շամուտ, Աթան, Դսեղ, Ահնիձոր, Քարինջ, Լորուտ բնակավայրերի գիշերային լուսավորության ընդլայնում >> ,
3/<<Թումանյան համայնքի Դսեղ բնակավայրի 7-րդ փողոցի սալարկում տուֆով>> ,
2.Սահմանել, որ՝ծրագրի իրականացման հետ առնչվող այլ փաստաթղթերի ստորագրումը,դրանցից բխող գործառույթների կազմակերպումն իրականացնում է Թումանյան համայնքի ղեկավարը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 16-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկ. ՌՈՒԶԱՆՆԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ)

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի նիստի օրը որոշել 2025 թվականի մարտի 21-ը, ժամը 11:00 :

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 17-Ա)*

Թումանյան համայնքի ղեկավար Սուրեն Թումանյանը ներկայացրեց Թումանյան համայնքի ավագանու և <<Քաղաքացիական պայմանագիր>> խմբակցության անդամներ Հրանուշ Վանյանի, Սեդրակ Գալստյանի և Ռաֆիկ Մարուքյանի ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցնելու մասին դիմումները, որը ընդունեցին ի գիտություն:

Թումանյան համայնքի ավագանու նիստին մասնակից ավագանու անդամներ՝

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ	
ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ	
ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐԵՆ	
ԴԱԼԼԱՔՅԱՆ ՆԻԿԱԼ	
ԽԱՉԻԿՅԱՆ ԳՈՀԱՐԻԿ	
ՂԱՋԱՐՅԱՆ ԿԱՐՈ	
ՎԱՆՅԱՆ ԴԱՎԻԹ	
ՎԱՆՅԱՆ ՀՐԱՆՈՒՇ	
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՄ	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Նիստն արձանագրեց՝

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՌՈՒԶԱՆՆԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ